ՀԻՇԱՏԱԿՆԵՐ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ

Առաջիկա տարում լրանալու է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-րդ տարելիցը: Հանրահայտ է այն վիթխարի դերը, որ խաղացել է ճեմարանը ԺԹ. դարավերջի եւ հաջորդ դարասկզբի հայ մտավոր կյանքում, հասարակական-քաղաքական, եկեղեցական-հոգեւոր, մանկավարժական ու մշակութային ասպարեզներում: Ճիշտ է նկատել ժամանակակիցը, երբ գրում է. «Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գոյությունը Հայոց երկրի սրտում պատմական մի մեծ շարժման նախակարապետն էր: Իր մեծ հիմնադրի՝ Գեւորգ Դ.-ի էական նպատակն էր եղած՝ տալ ուսում եւ գիտություն իր ժողովրդին»[1]:

Թեեւ այդ դերի մասին բավականաչափ գրվել է[2], սակայն հատուկենտ են ճեմարանի սկզբնական գործունեության վերաբերյալ հուշագրությունները ու վկայությունները: Այդ իմաստով բացառիկ արժեք է ներկայացնում ճեմարանի առաջին շրջանի սան, հետագայում հայտնի եկեղեցական գործիչ, հայագետ Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի (Տիգրան Մելիք-Մուշկամբարյան, 1867-1956)[3] հուշերը Նիկողայոս Ադոնցի եւ Գեւորգյան ճեմարանի մասին: Հուշերը, որ գրված են 1942 թվականի ամռանը եւ, ցավոք, մնացել են անավարտ, վերաբերում են Ադոնցի ճեմարանական առաջին տարվա (1882 թ.) եւ հատկապես ուսանողական տարիների (1894-1896 թթ.) իրադարձություններին: Բարեբախտաբար, հուշագրողը, լինելով լայն հետաքրքրությունների տեր անձնավորություն, հաճախ է հեռանում իր նշանակետ անձնավորության մասին հուշերը, տպավորություններ պատմելուց եւ դիմում է համեմատությունների, ժամանակի հուզող այլ խնդիրների: Տվյալ դեպքում Տիրայր Սրբազանը լայնորեն ու մանրամասն անդրադառնում է ճեմարանական մթնոլորտին, ուսման դրվածքին, մանկավարժների բնութագրին՝ մի խոսքով այն ամենին, ինչը ճեմարանը ներկայացնում են ճեմարան, որի մի մասնիկն է եղել իրեն հետաքրքրող անձը՝ Ն. Ադոնցը: Հուսով ենք, որ սույն հրապարակումը կօգնի ոչ միայն Ն. Ադոնցի կենսագրության՝ առայսօր անհայտ մնացած շատ էջերի բացահայտմանը, այլ նաեւ Գեւորգյան ճեմարանի սկզբնական շրջանի գործունեության վերաբերյալ առավել ամբողջական ու վավերական պատկերացում կազմելուն:

Հուշերը հրապարակվում են ինքնագրի հիման վրա, որը պահվում է Ե. Չարենցի անվ. Գրականության եւ արվեստի թանգարանում (Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի ֆոնդ, N 45 գ.): Այն գրված է 100 փոքրաչափ թերթիկների վրա (չափսը 14×22): Ընագիրը դժվարընթեռնելի է, առկա են ջնջված առանձին բառեր եւ նախադասություններ, որոշ հատվածներ ստիպված ենք եղել ուղղակի վերծանել: Հուշերը հրապարակելիս կատարել ենք ուղղագրական եւ կետադրական անհրաժեշտ միջամտություններ: Մեր կողմից ավելացված, լրացված բառերը վերցված են փակագծերի մեջ:

ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1 Տե՛ս «Էջմիածին», 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 111-112:

2 Մասնավորապես տե՛ս «Նշանավոր ճեմարանականներ», պրակ Ա.-Բ., Ս. Էջմիածին, 2005, 2009:

3 Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի մասին տե՛ս «Էջմիածին», 1956, Զ., էջ 24, 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 106-110: Տե՛ս նաեւ **Պ. Հ. Հովհաննիսյան,** Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյան (1867-1956), «Գեւորգյան ճեմարանի նշանավոր սաները», պրակ. Բ., Ս. Էջմիածին, 2009, էջ 443-448:

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳԵՈՐԳՅԱՆ ԱԴՈՆՑ
(1873-1942)[1]
ՀՈՒՇԵՐ ԻՐ ՄԱՍԻՆ

Անգլիական գրականության մեծ դեմքերից Viscount F. Alans Bacon, ընդհանուր անունով ճանաչված իբրեւ Lord Bacon[2], անգլիական թագուհիներից ամենից խստապահանջ Եղիսաբեթի օրերին[3] ապրող (1560-1626 թթ.)[4], որին են համարում Շեքսպիրի անունով հայտնի ընդարձակ երկերի բուն հեղինակը, իր «Գեղեցիկ ասացվածներ»՝ «Ornamenta rationalia» անունով հայտնի, մոքի ու խոհերի թռիչքի վայրկյանների գրչի խաղերից մեկի մեջ ասում է. **«Homo toties moritur quoties amittit suos»**, այսինքն՝ ***«Մարդ այնքան հաճախակի է մեռնում, որչափ հաճախակի յուր բարեկամներին է կորցնում»:***

Այդ զգացումն ունեցա եւ ես, երբ ստացա բարեկամիս գրած նամակը, որը գուժում էր. «Մարսելից ստացված հեռագիրը հաղորդում է, թե պրոֆեսոր Ն. Ադոնցը վախճանված է»[5]:

Գիտեի Ադոնցի վիճակը, նեղ գրությունը, դրամական ծանր կացությունը, քայքայված առողջության խանդարումը եւ հետզհետե ծանրանալը, սակայն չէի կարող երբեք ակնկալել, որ նա այսքան վաղ ու անակնկալ կարող էր բաժանվել մեզնից եւ ընդմիշտ մեկնել, որովհետեւ տակավին երազանքներ ունեինք ազատել զինքն այդ նեղ վիճակից եւ դժոխային կացությունից, որին էր ենթարկված Բելգիան գերմանացիների ձեռքով գրավվելուց հետո[6]:

Եւ ապրեցի օրեր ու օրեր մի նոր անձնական կյանքի, հույսերի ու երազանքների: Սակայն անողոք մահը հնձեց տարավ յուր եսական հույսերի ու երազանքների գրական դաշտի հասուն, գունագեղ ծաղիկները, որոնք փնջելու, ի մի բերելու գեղեցիկ օրերն էր ապրում վերջին տարիներին[7]: Նրա մահը անդունդ գլորեց մեր այնքա՜ն բաղձալի ակնկալությունները ապագա հոգեկան կյանքի, եւ մի նոր՝ թավշե մշակույթի դաշտ մտնելու մեր երազանքը, այստեղ՝ ազատ Ամերիկայի հողում, մեր մատաղ սերնդի նոր հայրենիքում, նոր աշխատանքներ կերտելու մեր երազանքը:

Եւ այս բոլորն անհետ կորան: Ադոնցը ընդմիշտ մեկնեց. օգտակար լինելու իր պատրաստակամ հոգին հեռացավ մեզնից, որովհետեւ հայ ժողովրդի համար տակավին գործնական է աղգային՝ «գնա՛, մեռի՛ր, արի սիրեմ»-ը:

Ճեմարանի շենքը դրսից և ներսից 1880-ականներին

Ն. Աղոնցը ճեմարանականների հետ
(նստած, ձախից առաջինը)

Տ. Տիրայր վրդ. Տեր-Հովհաննիսյան

Մի էջ Տիրայր Սրբազանի ձեռագրերից

Հնարավոր չէ՞ր արդյոք սիրել զինքը, գուրգուրալ յուր վերա նախքան հնձող, խաթարող մանդաղի հարվածի իջնելն այն արթուն հոգու տեր անձի վերա, որի զվարթուն սիրտը, միտքը՝ գիտական այնքան առատաբեր դանձերով օժտուն, դեռ երկար կարող էր մեր հոգեւոր կյանքի ու մշակութային դաշտի մեջ այնքան բերրի սերմեր ցանել, ատոք ու զեղուն հունձքի անխաբ հույսերով[8]:

Քա՞նի Ադոնցներ ունենք, որոնց կյանքի գնահատությունը անկարող եղանք ըմբռնել, արժեքավորության վերածել եւ յուր կյանքի վերջալույսի օրերը դարձնել հուսալից արշալույսի առավոտյան զողանջի երգ ու հույզ: Դժբախտաբար այդ է հայ ժողովրդի վերաբերումը յուր շնորհալի զեղուն մտքի, անհատնում կարողության ձիրքերով օժտված զավակների նկատմամբ:

* * *

*Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գոյությունը Հայ երկրի սրտում պատմական մի մեծ շարժման նախակարապետն էր: Գեւորգ Դ.-ի էական նպատակն էր եղած՝ տալ ուսում եւ գիտություն իր ժողովրդին եւ այդ ուսումն ու գիտությունը մատակարարել **կատարելապես ձրի**, առանց թոշակի պարտադրության: Ճեմարանի վարչությունն ինքն էր ընդառաջ գնում յուր սաների ուսմանն ծարավին: Դժվարություններ չկային՝ հարթված էին, միայն մի պահանջ՝ ուշիմ, մտացի, քաջառողջ եւ սովորելու ընդունակությամբ սատարուն թեկնածուներ ունենալու[9]...*

...Սեպտեմբերի առաջին օրերն էին 1882 թվականի: Ճեմարանի Հանդիսարանի հարավային պատուհաններ Հանդրվանների տակ կեսօրվա դասերից հետո Հանդստյան պահին խմբված մի խումբ «նորեկներ», ճեմարանի նոր համալսարաններ հագած, տոնական օրերի տրամադրությամբ եւ ճեմարան ընդունված լինելու անհուն գոհունակության հույզերն իրենց դեմքերին ու աչքերի մեջ ճառագայթելով, առավոտյան քնից արթնացած, ճնճղուկների անվերջ աղմուկ-ճռվողյունով վիճում, ցատկոտում, խոսում էին: Նրանք իրենց երջանկության գինով արբեցած չէին իսկ նկատում, թե մեծերը, կամ ճեմարանի լեզվով՝ «եղբայրները» ժողովված Հանդիսարանի դմբեթաՀարկի տակ հետաքրքրությամբ դիտում էին այդ նորեկներին, մասամբ տարված իրենց անհատական հուշերով, երբ իրենք եւս նորեկներ էին եւ մասամբ տարված այդ խմբի անհատ նորեկների անհատականությամբ, թե ի՞նչ են, ի՞նչ կարող են լինել եւ որը «մարդ պիտի լինի», որը «շալայքուլա պիտի դուրս գա»:

Խմբի մեջ մեկը նորեկներից, աշխույժ, բաց ու լայն ճրագող աչքերով, կլորիկ ու կարմրիկ այտերով, ավելի կարճահասակ ու նրբակազմ, քան ուղիղ ու թիկնեղ, տեղը Հանդիստ չգտնող, անդադար տեղից տեղ սահող ոտքերով, աշխույժ ու առանց տատանումի պատասխաններ էր տեղում տեղացող Հարցերի դեմ ու ինքն եւս անվերջ Հարցեր շպրտում շուրջն եղածնե-

րին ու աչքի էր ընկնում իր սիրուն դեմքով, անուշ ժպիտներով ու Հրացայտ Հայացքի շեշտակի նետերով:

Ձեռքին բռնած էր մի ողկույզ խաղող, որ անդադար օրորում էր բթամատի եւ ցուցամատի ամուր աքցանի մեջ, ժամանակ չունենալով ոսկեգույն Հատիկները բերանը տանելու, որովհետեւ այդ փոքրիկ բերանը զբաղված էր Հարցերի պատասխան տալով եւ Հարցեր տեղալով: Ողկույզը՝ չամչենի, դեղին-սաթ Հատիկներով, աջ ձեռքից տեղափոխեց ձախի պահպանության, որպեսզի աջը գործադրե ասածներն ավելի եւ պնդելու, շեշտ ու Համարձակ շարժումների անդադար օրորումներով:

Ձախ ձեռքը բարձրացրած պահին, երբ տարված էր աջն օգնության կանչելու՝ իր ասածը Հաստատելու, մի այլ ձեռք մեկնվեց եւ ողկույզը թռավ բթամատի եւ միջնամատի աքցան պրկումից:

Մեկ րոպե փոքրիկը շշմած եւ չիմանալով, թե վեճը շարունակեր, թե խաղողի Հետեւից վազեր, շփոթվեց, բայց նորից ինքն իրեն գտնելով, խոյացավ Հափշտակվող ձեռքի դեմ:

-Է՞, էդ Հի՞նչ ես անում, խաղողս Հու՞ր ես տանում,-ասելով:

-Է, բալաս, տեսնում եմ, որ ձեր գեղումը խաղող չես տեսել, ուտելն էլ չես իմանում, դրա Համար «չուտողի մալը, ուտողին Հալալա»,- ասաց մյուս աշակերտը, որ Հինգերորդ դասարանի Հայտնի երգիծաբան Ստեփանն էր, եւ ձեռքը վեր բարձրացնելով նորեկ փոքրիկի Հասակի Հասողության սահմանից շատ վեր դարձրեց:

-Բալաս-բալաս չկա, խաղողս տուր, թե չէ դյուդըմ ըս...

-Թե չէ, ի՞նչ...

-Քե ասըմ ըմ տու, թե չէ կը թիսիմ պարանց կը քըցեմ...(= թե ոչ կը զարկեմ, գետին կը գլորեմ):

Եւ այս խոսքերն ուղղված էին իրենից շատ ավելի բարձրաՀասակ, տարեց մի աշակերտի:

Ստեփանի տրամադրությունն ավելի բարձրացավ եւ ծիծաղելով ասաց.

-Տո, էս ծիծիկոն ո՞վ է բերել...

-Ես ծիծիկո չեմ: Թե ես ծիծիկո եմ, դու ի՞նչ ես..., դիտե՞ս, ինչ ես:

-Ի՞նչ:

-Պառավ ծերոն...

Հանդիսարանի տակ Հավաքված խմբի մեջ ծայր տվեց Հոմերական ծիծաղի ալիքները, որ քանի դնաց լայնացավ, տարածվեց, մինչեւ որ զանգակի ձայնը Հնչեց, որ ամենքին դասի էր Հրավիրում:

Այդ րոպեից Ստեփանին կպավ «Ծերոն» [= ծեր, ծերունի] մակդիրը, իսկ նորեկ փոքրիկին՝ «Ծիծիկո» կոչումը: «Ծերոնը» ժպտալով Հանձնեց Արարատյան դաշտի արեւի ջերմությունն իր Հատիկների մեջ ամբարած ողկույզը «Ծիծիկոյին» (=ծծկեր, փոքրիկ, ուցոոո՛) եւ ճեմարանը մնաց իր լրջության պատյանը:

Այդ «Ծիծիկոն» Այունյաց աշխարհի Բռնակոթ գյուղի Ադոնց Գեւորգի տղա Նիկողայոսն էր, որ արձանագրվեց ճեմարանի մատյանի մեջ՝ «Նիկո-

ղայոս Տեր-Ավետիքյան. աշակերտ Ա. դասարանի»: Եւ Տեր-Ավետիքյան Նիկողայոսը մնաց Մայր Աթոռի ճեմարանի Հոգեւոր ինամքի տակ՝ մնալով առատապես այն առատաբաշխ աղբյուրից, որ յուր ապագա ասպարեզի ռահվիրան էր:

Ասացի, որ Տեր-Ավետիքյանը ուշիմ էր ի բնե, ջանասեր իր Հակումով, Հետամուտ իր ուսման առարկաներին իր նեղքին պահանջների դրդումով, օժտված աշխույժ մտքով եւ դյուրըմբռնելու կարողությամբ, այնպես, որ շատ չանցած նորեկ Տեր-Ավետիքյանը ո՛չ միայն դրավեց ուսուցիչների ուշադրությունը, այլեւ սիրելի դարձավ իր ընկերներին, որոնց մեջ ամենից փոքրն էր, թե՛ տարիքով եւ թե՛ Հասակով: Եւ այդ աշխույժ, Հրաշարժ, փոքրիկ, ճկուն մարմնի մեջ նստած էր ապագա լուրջ ու Հետախույզ մտքի գիտնականը: Իր ընկերների սիրելին էր, ոչ միայն իբրեւ ճարպիկ, ամեն ծակ ու ծուկ մտնող «ծիծիկո», այլեւ իբրեւ պատրաստակամ օգնող ընկերներին՝ դասերին, դժվարին պարագաներին: Կարճ ժամանակի մեջ իր փոքր շրջանի՝ դասարանական միջավայրի մեջ, ձեռք բերեց Հեղինակություն, դերակարգություն:

-Ծիծիկո, էս ի՞նչ է...

-Ծիծիկո, էս ի՞նչպես է...

-Ծիծիկո, էս ի՞նչ է նշանակում...

-Ծիծիկո, էս ինչպե՞ս անեմ:

Եւ ամեն մեկին իր բաց սիրտը, Հոգին, պատրաստակամ Հակումը պատասխան էր տալիս, լուծում ընկերոջ առաջ դրված անլույծ Համարված Հարցը՝ պարզելու Հստակ բացատրությամբ, ամենքին գոհ պահում: Ինքն եւս՝ գոհ, չզգալով անգամ, թե դժվար կացությունից էր Հանում իրեն դիմողին:

Ճեմարանի մեջ աշակերտների դասերի պատրաստության ժամերը 4½ ժամ էին երեկոյան: Ժամը 2-ից մինչեւ 4½-ը աշակերտներն ազատ էին՝ նվիրված խաղերի, զբոսանքի, ծաղկանոցների մշակության: Վազելու, ցատկելու, ծառեր մագլցելու կամ Հանդիստ շրջագայելու ճեմարանի ընդարձակ պարտեզի եւ կամ ճեմարանի մեծ եւ փոքր՝ Հարավային ու Հյուսիսային բակերի մեջ: Եւ այդ ազատ ժամերին աշակերտությունը տարված էր ամբողջովին իրենց ազատ ժամերն, ըստ ամենայնի, օգտակար դարձնելու բնական միտումով: Եւ այդ բոլորի մեջ «ծիծիկոն» մաս ուներ եւ բաժին, որին նվիրվում էր իր պատանեկան եռանդի ամբողջ թափով:

Սակայն Հաճախ փոքրիկ Նիկողոսը սիրում էր մեծերի, «եղբայր»-ների շրջանի մեջ տեղ գտնել, մնալանդ, որ Համոզված էր, թե «եղբայր Նիկողայոսը»՝ մի այլ բռնակոթցի, իր բնական թեւարկուն, պիտի սիրով ընդուներ նրան եւ կարեւոր պարագաներին իր պաշտպանության տակ առներ: Այդ «եղբայր Նիկողայոսը» Բռնակոթի Պետրոս Բեկ Մելիք-Թանդյանի որդին էր (ապագա Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանդյանը''), որ ճեմարանի շրջանի մեջ Հայտնի էր «Թանդի» կամ «Հոդուրուշ» մակդիրով, որը մի առանձին սեր ու դուրդուրանք ուներ իր Համադյուղացի ուշիմ ու

սրամիտ պատանյակի նկատմամբ: Եւ եթե «եղբայր Նիկողայոսը» չլիներ անդամ, այնտեղ կային «եղբայր Դավիթը»՝ շինուհայրցին, «զկեռ» մականունով՝ իր կարճ ու կլոր, անդադար շարժուն ու անապառ եռանդի համար: Կամ «եղբայր Տիգրանը»՝ տաթեւացին, («Գոգո» մականունով, իր նուրբ դիմագծերի եւ աղջկանց շարժումներով, խոսելու ձեւով): Կամ «եղբայր Փարամաղը» («Հուրամաղ» կամ «Գող Վասիլ» մականունով, իր աշխույժ, հանդուգն, անհանդիստ բնավորության պատճառով, մեկն ապագայի քաղաքական հերոսներից, Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի դեմ կատարված մահափորձի մասնակիցներից, Թիֆլիսից Կոջոր տանող ճանապարհի վրա[12]): Ու կամ «եղբայր Մարտիրոսը»՝ արծվանիկցին, («սպլին», «spleen» մականունով[13], որի երեսին ժպիտ չէր խաղում երբեք): Եւ եթե այդ համշիրակներն իսկ չլինեին, կային շուրջը «մեծերը»: Լսարանների[14] ուսանող աշակերտներն իսկ սիրով էին ընդունում «Ծիծիկոյին» իրենց մեջ, հարցեր տալով այլեւայլ խնդիրների մասին եւ սիրով լսում նրա պատրաստաբան պատասխանները, որ միշտ էլ աշխույժ ծիծաղի ու խնդունքի նյութ էր նրանց համար, իսկ փոքր Նիկողոսի համար զարմանքի նյութ, թե ի՞նչ կար ծիծաղելու այդքան բնական պատասխանների մեջ:

Եւ երբ շատ նեղն էին ձգում նրան ամեն կողմից տեղացող պատասխաններով, մեծ «եղբայր Նիկողայոսը» հարեհաս Սբ. Սարգսի նման վրա էր հասնում ու ազատում նրան, ձեռքից բռնելով եւ տանելով այդ «դոնդիների» (խենթերի) եւ «խալտուրանների» (անարժեք) միջից հանելով: Եւ մեծերը, հոգատար մեծերի զգացումով, հարցնում էին.

-Ծիծիկո՛, շատ նեղացրինք:

-Երբեք, ինչո՞ւ պիտի նեղվեի...

-Նորից կգա՞ս...

-Այո՛, եղբայր...այո՛, անշուշտ:

Եւ փոքր Նիկողոսի հեռանալուց հետո «մեծ»-երը մոքերի փոխանակումներ էին կատարում, եւ իբրեւ հետեւանք, եզրակացնում էին.

-Այս փոքրիկից մեծ մարդ պիտի դուրս դա:

Եւ այդ եզրակացությունը սխալ չէր: Կոլյունի մեջ առյուծն է նստած, իսկ արծվիկը՝ արծիվն է վաղվան: Եւ այդ արծիվն անդիտակ ապագայի նկատմամբ եղած այդ բարեգուշակ մարգարեության, հանձնվում էր խաղընկերներին՝ կամ հյուսիսային բակի լայն սալարկի վրա վեգ խաղալու եւ կամ հարավային բակում գերի-գերի խաղով տարվելու:

* * *

Ճեմարանի կյանքի մեջ «սերտողության ժամերը» նույնքան սրբազան պահեր էին, որքան դասերի ժամերը: Եւ եթե այս վերջինները մոքի մնունդ հոգեւոր «կաթի ջամբանն» (= կերակրմանն) պահերն էին, որի մատակարարները՝ ճեմարանի նույն ժամանակի ամենից պատրաստված եւ կարող ուսուցիչների խումբն էր (Ա. Պալասանյան՝ «Հայոց պատմության»

այդ անղուգական Հմայիչ պատմիչը եւ ուսուցիչը[15], Կ. Կոստանյանց՝ «Հայոց լեզվի եւ գրականության» Հմուտ, առինքնող Հեղինակավոր աղբյուրը[16], Փ. Վարդանյանց՝ «Հին ու նոր պատմության», «Ընդհանուր գրականության», իսկապես անապառ գիտության եւ Հետաքրքրության մղող վՀուկը[17], Նիկ. Խոսրովյան՝ «Ռուսաց լեզվի եւ գրականության» առատաՀուն ակնի ուսուցիչը[18], Սեդ. Մանդինյան՝ մանկավարժության, փիլիսոփայության առարկաների վարպետը[19], Արշ. Նահապետյան՝ տիեզերագիտության, բնալուծության չորուցամաք դասերը բանաստեղծական շնչով ու գիտականորեն Հմայիչ բացաՀայտողը[20], Ա. Սիմոնյան՝ թվաբանության, դրաՀաշվի, երկրաչափության, եռանկյունաչափության, բարձր մաթեմատիկայի տարրերի գիտությունը Հետաքրքրությամբ վարող-ավանդողը[21] եւ այլն): Ա՛Հա այս կարող ուսուցչական խումբը գիտեր այդ կաթը ջամբել ուսման ծարավ մոքերին ու Հոգիներին՝ «դասերի ժամին»: Այդ ժամերի ջամբածն ու տվածը յուրացնելու, սեփականության դարձնելու, ամբարելու եւ շտեմարանի ղենքերը պատրաստելու պաՀերը «սերտողության ժամերն» էին:

Ճեմարանի երկրորդ Հարկի Հյուսիսային երկու մեծ սրաՀները «սերտարան»-ներն էին: «Սերտողության ժամի» զանգակը Հնչելուց Հետո ճեմարանի աշակերտության մի մասը՝ Ա., Բ., Գ. դասարանները, ժողովվում էին սրաՀներից մեկի, եւ մյուս մասը՝ Դ., Ե., Զ. դասարանների աշակերտությունը մյուս սրաՀի մեջ, իսկ լարանցիները՝ իրենց լարանների մեջ: Հազիվ երկու րոպե անցած, ամբողջ ճեմարանը խորասուզվում էր խոր լռության մեջ, դադարում էր ամեն շարժում, տիրում էր մեռելային մի վիճակ՝ ձայն, շշուկ, խոսք, շարժում դադարում էր: Ամենքը նստած խոշոր դրասեղանների շուրջ՝ 20-ական Հոգի, տարված էին միայն մի էական նպատակով՝ պատրաստվել Հետեւյալ օրվա դասերի պատրաստությամբ, շարադրություն գրելու, խնդիրներ լուծելու, օժանդակ գրքերի ընթերցանության մեծ գործով: Ոչ ոք իրավունք ուներ շարժվել տեղից, խոսել իր մոտ նստածի Հետ, նույնիսկ շշուկով: Նույնիսկ տետրակի թերթերը, գրքերի թղթերը թղթատելու պաՀին իսկ ամենափոքր ձայն, շշուկ լսվեր, Հսկող վերակացուի անլսելի քայլքով մոտենալն ու ձեռքն աշակերտի ուսին դնելը մեկ էր լինում, մի պարագա, որ ամենամեծ ամոթանքն էր մեծի ու փոքրի Համար եւ ամբողջ սերտարանի Հուզված աչքերն ուղղվում էին խաղաղությունը վրդովելու անՀանդուրժելի խանգարման Հեղինակի վրա, եւ խեղճը չէր իմանում, որ ծակը մտներ: Ինքնաարդարացման ամենափոքր իսկ փորձ՝ ո՛չ տանելի էր եւ ո՛չ ներելի: Ամենից մոտ ընկերը, առանց խղճաՀարության, դատապարտության քլե տալու պատրաստ էր իր ընկերոջ, որովՀետեւ սրբազան լռությունը, Հոգեւոր մատակարարության պաՀի վեՀությունը խանգարված էր ի վնաս ուշիմ աշակերտի մոքի ծարավով տարված Հոգու:

Բառարաններ, օժանդակ մատյաններ, տեղեկատու աղբյուրների գրքերը դարսված էին մեծ, լայնշի սեղանների վրա, որից օգտվելը պաՀանջ էր, արտոնություն, իրավունք՝ առանց ուրիշի իրավունքը խանգարելու: Եւ այդ խոր, պատանեկան տարիներից պատրաստված գիտակցությունը

սովորույթային էր, որ այնքան շեշտված էր ճեմարանից եկած յուրաքանչյուր աշակերտի բնավորության մեջ։ Եւ այդ աշակերտներից մեկը լինելով եւ Ադոնցը, նրա հոգեկան ապրումների, ապագա գիտական պրպտումների հաջողության համար կատարյալ պահանջ էր այդ անպայման լռության միջավայրը, որի բացակայությունը նրան ջղայնացնում եւ hors de son assiette-եր[22] վիճակի էր մատնում եւ կյանքի շատ դյուրություններից իսկ զրկվելու պատրաստակամություն էր հայտնում «անպայման լռության» այդ դրության տեր դառնալու համար, թե՛ իր ուսանողական շրջանի, եւ թե՛ ուսուցչապետության կյանքի ժամանակը։

Ն. Տեր-Ավետիքյանը մնաց ճեմարանի ինամքի, կրթության ու դաստիարակության տակ ամբողջ ինը տարիներ՝ լրացնելով դասարանական Ա.-Զ. շրջանը եւ լսարանական Ա-Գ տարիների բաժինը։ Այդ ամբողջ տարիների ուսանողական շրջանի մեջ նա մեկն էր իր շրջանի եւ ճեմարանի աշակերտության անդամներից։ Սովորում էր առանց ծանր տքնության, առարկաները յուրացնում էր մեծ դյուրությամբ, առանց քրտնաջան հոգեմաշուքի, առաջիններից էր եղած դասարանի մեջ բոլոր առարկաներից։ Մանավոր սեր ուներ դեպի լեզուները, մատենագրության պատմությունը, քննական-հետախուզական վերլուծությունների դասերը՝ գրականության ու պատմության, ինչպես եւ այլ եւ այլ շրջանների նկատմամբ։ Տարված էր բանաստեղծության ճյուղում, ուր իր երիտասարդ, քնքուշ, դյուրահաղորդ հոգին անվերջ ասպարեզ էր գտնում հետեւելու, վերանալու, փոքր ու համառոտ ակնարկներից բանաստեղծի ապրումներն ու երազանքները, հույզերն ու երազանքի աշխարհը կռահելու։ Հեռու չէր նաեւ իր տուրքը վճարելու մուսաներին եւ հաճախ գեղեցիկ փորձեր էր անում Պառնաս բարձրանալու եւ այնտեղ ժամերով անձնատուր լինել իր ներքնաշխարհի ապրումներին։ Սակայն չափազանց նուրբ քննադատի հոտառությամբ ժպտուն, իր գրածները պահում էր իբրեւ գաղտնաշխարհ եւ շատ սակավ մոտերիմները ծանոթ էին նրա այդ հակմանն։

Փոքր տարիքից սկսած նրա մեջ զարգանում էր քննադատական ոգին՝ ոչ բծախնդիր՝ pedant, քննադատի չափանիշով, այլ լայնախոհ, պատմական տվյալների հիմքով առաջնորդվող ոգով։ Հայոց պատմության շրջանները նրա համար ոչ միայն պարզ, ուսանելու պատեհություններ էին, այլ իրական հոգեկան-մտավոր ապրումներ, որոնց մեջ հաճախ տեսնում էր մի նոր գիծ, որ ընկերների աչքից էր խուսափած։ Եւ այդ գիծն էր, որ զարգացավ, աճեց եւ դարձավ նրա ապագա պատմական-կենցաղական-քաղաքական ուսումնասիրությունների լայն դաշտ, ուր նրա հոգին սավառնում էր անցյալը հիրավի ապրողի թռիչքով, անվրեպ տեսողությամբ օժտուն, ուր ամենից փոքր մի պատմական իրողությունը, ակնարկ իրերի վրա, հասկանալի միայն ժամանակակից մարդու համար, պատճառ էր դառնում, որ իր գրիչը՝ նրա ստեղծագործ հոգու Պեգասը նստած, պարզեր պատկերներ մեկը մյուսից ավելի դրավիչ, ոչ իբրեւ բանաստեղծական քմայքի արտադրութ-

յուն, այլ ճարտար արվեստագետի, անվրեպ վերականգնում անցյալի ավեր շինվածքն ու կերտվածքն՝ իրենց բոլոր ճոխությամբ եւ հմայքով:

Բնավորությամբ համեստ էր, ընկերական, հաղորդակից, հարաբերությունների դժվարությունները դյուրավ լուծող ու հաշտեցնող, ուրախ ու դյուրահաղորդ, կատակաբան եւ կատակներ սիրող, հեռու հոգվահավի պես ուռչելուց, որովհետեւ ինքն ավելի ընդունակ էր եւ ավելի ճոխացած մտավոր պաշարով եւ ինչպես ճեմարանի նորնախիջեւանցիք էին ասում՝ «գուսելի պես չէր ուռչում» եւ հաճախ ինքն էր ծաղրում այդպիսիներին Հովհաննես վարդապետի «Տաղ թռչնոց» անունով տաղից երգելով՝

Գուսկալ հաւքն կարմիր կատար
մէջ փողոցնուն թեպրով խայտար,
Պահ մի քըրքրէր եւ դիղանայր,
Հետէն բացուէր եւ սուս չմնար:

Ուներ հաճելի մեղմ ձայն, դրավիչ ու հանդուցիչ: Փոքր ժամանակը «մեծ եղբայր»-ներն էին երգել տալիս նրան հաճելի ժամանցի համար դուրսը՝ ճեմարանի պարտեզի, Ղռի այգու եւ անտառի հովանոտ ծառերի տակ ապաստանած: Երգում էր մելամաղձիկ, սիրտ ճմլող, ինքնուրույն մի դրավչությամբ, որի ժամանակ նրա պայծառ, վճիտ, միշտ փայլուն եւ շողերով առ լի աչքերի մեջ երեւում էին թախծի մնշող որդի առաջին նշանները, մանավանդ երբ երգում էր Ղարաբաղի «Բայաթին», «Շիքաստին», «Բայաթի քուրդը», երբ նրա հոգին թափառում էր հայրենի ձորերում, անտառներում եւ լեռների վրա եւ հանկարծ նրա վճիտ ձայնը սկսում էր բեկբեկվել, եւ նրա՝ հեռու հորիզոններին սեւեռած աչքերը տակավ առ տակավ պատվում էին վշտի քողով, եւ նրա աչքերն աքողվում էին խոր թախծի վարագույրով, եւ հանկարծ աչքերը լցվում արցունքի փայլակ կայլակներով: Եւ հանկարծակի տեղից ցատկում էր եւ արագ, հալածվող եղջերուի պես փախուստի դիմում եւ ապավինում Ղռի այգու ընդարձակ որթատունկի թմբերից մեկի տակ թաքնվում:

Մելամաղձիկ, թախծոտ երգի այդ դիծը միշտ էլ մնաց նրա հոգու մեջ եւ դարձավ մի ինքնուրույն, բնորոշ դիծ նրա ամբողջ կյանքի մեջ: Մի ներքին անլույծ դաղտնիք միշտ էլ հետապնդող փերու նման թաքնված էր նրա ներքին աշխարհի մեջ եւ այդ բիծը մնաց նրա դեմքի բնորոշ իաղերից մեկը: Թախծի անորոշ, հաղիվ նշմարելի մառ ու բալ (=մշուշ) անբաժան էր նրա աչքերի խորության մեջ, որ հայելին է մեր ներքնաշխարհի: Հոյզը, անննշմարելի օտար աչքերից, իսկույն այլայլվելու իր առանձնահատուկ դիծը, որ այնքան առանձնահատուկ շնորհալիությունն էր շնորհում նրա դեմքին նրա հասուն տարիքի շրջանին, եւ որ այնքան դրավիչ էր դարձնում նրան՝ հասարակական նեղ, մտերմիկ շրջանի պահերին, այնքան նրբին ու կշռված հարաբերության մի ոստայն հյուսում իր շուրջը, իսկապես գնահատված, մանավանդ դեղեցիկ սեռի կողմից, նրա խոսքը դարձնում էր տպավորիչ, հայացքը՝ դրավիչ, ժպիտը՝ առինքնող, բնավորության (habität-ի) այդ դիծը տնական միջավայրի շրջանից:

* * *

Ճեմարանի այդ շրջանի մեջ դասական լեզուներ չէին ավանդվում: Այդ առարկաները մնան ավելի հետո: Այդ օրերից իսկ Նիկողայոս Տեր-Ավետիքյանը զգում էր իր մեջ իր ապագա կյանքի ուղղության հետեւելու հակումն եւ հաճախ էր դանդաղվում, թե պարակերենի եւ տաճկերենի կողքին ինչո՞ւ պիտի չդասավանդվեին եւ լատիներենն ու հունարենը, որոնցից մանավանդ վերջինը, որ այնքա՛ն խոր աղդեցություն էր ունեցած հայոց լեզվի քերականության եւ շարահյուսության կազմի վրա՝ մի կողմ թողնելով բառամթերքի կազմը:

Եւ դեռեւս ճեմարանի 4-5-րդ դասարանների մեջ Նիկողայոսը սկսեց աղաստ ժամերին սովորել երկուսն եւա՝ ավելի ժամանակ հատկացնելով հունարենին: Բայց ինքնուսուցման եղանակը նրան չգոհացրեց եւ մոռադրվեց ճեմարանն ավարտելուց հետո պատրաստվել ռուսական գիմնազիայի քննության, որովհետեւ վերջնական իր որոշումն էր մոնել համալսարան եւ հետեւել Արեւելյան լեզուների գիտության:

Ճեմարանի լարանական բաժինն ավարտելուց հետո[3] նա անցավ Թիֆլիս՝ պատրաստվելու գիմնազիական քննության: Գեւորգյան ճեմարանը, թեեւ իր գիտության չափով շատ ավելի բարձր էր ռուսական գիմնազիաների տված ուսման ծրագրից, սակայն եւ այնպես ճեմարանի դպրոցական շրջանն ավարտողները, որոնք ուսման չափով համահավասար էին գիմնազիական գիտության, պետական օրենքով իրավունք չունեին, իբրեւ իսկական ուսանողներ, համալսարան մոնելու: Նույնիսկ լարանական մասնագիտական բաժինն ավարտողները զրկված էին այդ իրավունքից եւ կարող էին համալսարան հաճախել լոկ իբրեւ աղաստ ունկնդիրներ, չնայած, որ գերմանական համալսարաններն անխտիր ընդունում էին Գեւորգյան ճեմարան ավարտողներին, նույնիսկ դպրոցական շրջանն անցածներին՝ իբրեւ իսկական ուսանողներ:

Ադոնցը, անցնելով Թիֆլիս, կարող եղավ մի տարվա մեջ պատրաստվել եւ պետական գիմնազիայի քննությունները հանձնել՝ կրելով նյութական ծանր նեղություններ: Բայց նա վհատողներից չէր՝ նեղությամբ, չարչարանքով, զրկանքներով, սակայն ժպիտը մշտապես շրթունքներին, դժվարությունները ոտքի տակ տալով, կամ ինչպես ինքն էր սիրում արտահայտվել՝ «քարին քացի տալով», ձեռք բերեց ռուսական գիմնազիայի ավարտական վկայական: Եւ այն, ինչ որ այնքան դժվարին էր թվում նրա աչքին, ո՛չ ուսման դժվարությունները հաղթահարելու տեսակետից, այլ չարքաշ կյանքը կրելու առաջ խոնարհվելու կքումով, այժմ այդ բաղձալի վկայական իսկ ձեռքն անցնելով, զգաց, որ իր առաջ ծառացած է մի շատ ավելի ծանր խնդիր, որի հաջող լուծումից էր կախված իր ապագան, իր երազանքների իրագործումը եւ կյանքի վերջնական նպատակին հասնելու միջոցներ գտնելը:

Այդ հարցը՝ թոշակ ունենալու խնդիրն էր: Մի հարց, որ այդ օրերին չունեւոր տան զավակների համար դյուրությամբ չէր վճռվում...

* * *

Ճեմարանի մեջ, թեեւ ես դասարանով ու տարիքով ավելի բարձր էի եւ տարեց[14], սակայն միշտ էլ ներքին բարեկամությամբ կապ կար մեր մեջ՝ Հովանավորի ու Հովանավորյալի նախնական շրջանի ժամանակ իբրեւ «եղբայր» եւ «ծիծիկո» եւ ապա իբրեւ ավելի մոտ Հոգեկան կապերով իրար միացած ճեմարանցիներ, մանավանդ, որ կար նաեւ Հայրենակցական կապերի մագնիսական ուժը, որովհետեւ ծիծիկոն «Սարեն-էն-ղոլեցի» էր (=Այունիքից, Զանգեզուրի գավառից), ինչպես սովոր են անվանել զանգեզուրցիներին բուն ղարաբաղցիները: Այդ անվանակոչման՝ «Սարեն-էն-ղոլեցի» (=լեռան մյուս կողմից) մակդիրի մեջ կար արհամարհական մի շեշտ, վերեւից նայելու՝ մի Հոխորտանքի գիծ, որովհետեւ առհասարակ զանգեզուրցիներն ավելի կոշտ էին ու անտաշ, դժվար Հղկվող մի քար եւ քաղաքավարության շփման շատ դյուրավ չենթարկվող տարրեր, քան բուն ղարաբաղցիները: Ղարաբաղցիների բնավորության մեջ շատ ավելի էր դրված դյուրավ Հղկվելու, միջավայրին Հարմարվելու եւ կոշտությունը աստիճանաբար մոռանալու ունակությունը, որի այնքան ցուցադիր օրինակներն էին Բաքվի եւ Թիֆլիսի Հայ ընտանիքների այրերը՝ Հարստություն, դիրք ձեռք բերած ներկայացուցիչներ, ուր ղարաբաղցին եւ սարեն-էն-ղոլեցին իսկույն աչքի էին ընկնում: Այսպես էին ոչ միայն միջավայրի անմիջական ազդեցության ներքո շփման ու Հղկումի ենթարկվածները, այլ նույնիսկ բարձրագույն կրթություն ստացած, Հասարակական աչքի ընկնող դիրք ունեցող անձերը, որոնց վրա գիտությունը, իր ուսման կնիքը դնելով Հանդերձ, սակայն նրանց վարվելու, Հարաբերվելու եղանակը միշտ էլ social lapsus-ի զգալի Հետքեր էր կրում (որի ամենից ավելի աչքի ընկնող ներկայացուցիչ կարող էր Համարվել Հանգուցյալ Մեսրոպ նախկին արքեպիսկոպոսը[15]): Մի գեղեցիկ բացառություն էր կազմում ճեմարանի «Սարեն-էն- ղոլեցիների» մեջ Նիկողայոս Տեր-Ավետիքյանը՝ նուրբ կազմվածքով, դրավիչ ժպիտով, առիթքնող Հայացքի սուր ու թափանցող աչքերով՝ մանր ու սեւեռուն, ոչ խուզարկու, Հետաքրքրվող, Հոգու գաղտնիքները կորզելու ցանկությամբ: Նրա Հայացքը ավելի բարեկամական ոգու մի Հայելի էր, որին չպատասխանել նույն Հույզ ու կապերով, Հնարավոր չէր: Եւ երբ երբեմն մոխրի տակ անմեղած «Սարեն-էն-ղոլիցն»-ովի ծայրերն էին երեւում, ես կատակով «ծիծիկոյին» Հիշեցնում էի իր «ալախաթունի պողերը» (=խխունջ, limacon, snail[16]), իսկույն կարմրում էր, կծկվում եւ դրավիչ աչքերի խոնարհումով լռիկ ներողություն Հայցում:

Ճեմարանից ելնելուց Հետո եւս մեր Հարաբերությունները մնացին այն մոերմիկ կապերը, որի շրջանին ես նրա Համար դարձա «ռաբբի», իսկ ինքը

միշտ էլ մնաց «ծիծիկո» փաղաքուշ մակդիրի տակ ապաստանած, որի մեջ կային այնքան դեղեցիկ հուշեր անցյալի:

Եւ մի օր Հանկարծ Թիֆլիսից ստացա մի հուսակտուր նամակ՝ ուղղված իր սիրելի «ռաբբիին», որի մեջ պարզել էր իր ջերմ ըղձանքը՝ միջնորդել Ա. Մանթաշյանին, որ նա իր թոշակավոր սաների շարքի մեջ առներ իրեն: Մանթաշյանի հետ հանդիպած էի մի երկու անգամ, սակայն, կասկածելով, որ մի վարդապետի միջնորդությունը կարող էր կարեւոր դեղահաբ չլիներ Ադոնցին իր հիվանդությունից փրկելու համար, դիմեցի Աբգար Հովհաննիսյանին[7]՝ ինդրելով նրա ազդեցությունը Մանթաշյանի վրա, որի հաջող եքի մասին կասկած չունեի: Այդ դիվանագիտական manoeuvre-ն հաջողվեց եւ Ադոնցը՝ իբրեւ թոշակառու-սան Մանթաշյանի, 1894 թ. աշնանը մեկնեց Ս. Պետերբուրգ՝ մտնելու կայսերական համալսարանի Արեւելյան լեզուների գիտության բաժինը՝ արձանագրվելով Նիկողայոս Գ. Ադոնց (Տեր-Ավետիքյան ազգանունից հրաժարվելով նա դիմազիական իր վկայականն ստացավ այդ անունով, որով եւ հայտնի դարձավ ապագային՝ համաշխարհային պատմական գիտության բնագավառում):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ն. Ադոնցի ծննդյան թվականի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր ցուցումներ (1871, 1873, 1875), որոնք հետեւանք են հենց նրա՝ տարբեր փաստաթղթերում տեղ գտած անճշտությունների: Սակայն, ինչպես ցուցում է Բռնակոթի գյուղական ծխական մատյանը, այս շփոթը փարատվում է՝

« Ծնունդ- յունուարի 10, 1871

Անուն- Նիկողայոս

Անուանք ծնողաց- Գեւորգ Առաքելեան

Դանա Ռոստոմբէկեան»

(տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 47, ց. 3, գ. 237):

2. Ալան Ֆրենսիս Բենկոն-փիլիսոփա, անգլիական մատերիալիզմի հիմնադիր, Անգլիայի վարչապետ:

3. Խոսքը Անգլիայի թագուհի Ելիզավետա I Թյուդորի (1533-1603) մասին է:

4. Պետք է լինի՝ 1561-1626:

5. Ն. Ադոնցը մահացել է 1942 թ. հունվարի 26-ին, Բրյուսելում:

6. Բելգիան ռազմակալվել է 1940 թ. մայիսի 28-ին: Հատկանշական է, որ երբ օկուպացիոն իշխանությունները փորձեցին Բրյուսելի Ազատ համալսարան, նաեւ հայագիտության ամբիոն մտցնել գերմանացի պրոֆեսորներ, համալսարանական պրոֆեսուրան կտրականապես հրաժարվեց համագործակցել նրանց հետ, որի արդյունքում համալսարանը փակվեց, իսկ դասախոսական կազմը (այդ թվում նաեւ Ադոնցը) մնաց առանց աշխատավարձի:

7. Ինչպես վկայում են Ն. Ադոնցի մտերիմները (Գարեգին արքեպ. Հովսեփյան, Հովհ. Զավրյան, Ա. Զուպանյան եւ ուրիշներ), կյանքի վերջին շրջանում պատմաբանը հետամուտ էր իր ուսումնասիրությունները դասակարգելու, նորովի խմբագրելու եւ հատորներով հրատարակելու ծրագրին:

8. Ն. Ադոնցի վերջին օրերին ականատես Հ. Էսեկուլյանը հավաստում է, որ 1941 թ. ամռանը, երբ պատմաբանը համեմատաբար իրեն լավ էր զգում, Բրյուսելի հարուստ հայրենակիցները նրան առաջարկում են տեղափոխվել Շվեյցարիա՝ բուժվելու, սակայն «ան շատ հպարտ էր նման առաջարկ մը ընդունելու համար» եւ մերժում է (տե՛ս Հ. *Էսեկուլյան,* Նիկողայոս Ադոնց. Տպավորություններ եւ հուշեր. «Երիտասարդ հայուհի», ամսագիր, Բեյրութ, 1950, թ. 8, էջ 18):

9. Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի հուշերի հետագա հատվածը, որ նվիրված է Գեւորգյան ճեմարանի կազմակերպմանն ու գործունեության առաջին շրջանին, լույս է տեսել «Էջմիածին» հանդեսի 2004 թ. նոյեմբերյան համարում, ուստի այստեղ զանց ենք առնում այն:

10. Ֆրանսերեն mignon նշանակում է գողտրիկ, քնքուշ, նուրբ, ռուսերեն՝ хрупкий, нежный, որ կարող է հոմանիշ լինել ծծկերին:

11. Ներսես արքեպ. Մելիք-Թանգյան (1866-1948)-եկեղեցական, հասարակական-քաղաքական, մշակութային ականավոր գործիչ: Գեւորգյան ճեմարանում սովորել է 1877-1886 թթ. ընթացքում:

12. Խոսքը հայ ազգային-ազատագրական շարժման ակտիվ գործիչ, հնչակյան կուսակցության անդամ Մատթեոս Սարգիսյանի (1863-1915) մասին է, որը ճեմարանում սովորել է 1878-1883 թթ. ընթացքում:

13. Spleen- (անգլերեն)- մաղձ, ծանծրախտ: Այսինքն՝ պետք է, որ արծվանիկցի Մարտիրոսի մականունը լիներ մաղձոտ:

14. Ուսումնական ծրագրի համաձայն Գեորգյան ճեմարանում ուսումնառության տեւողությունը ինը տարի էր, որից 6-ը՝ դպրոցական, իսկ երեքը՝ լսարանական բաժնում:

15. Ստ. Պալասանյանը (1837-1889) ճեմարանում դասավանդել է 1881-1889 թ. ընթացքում: Առանձնակի ազդեցություն է ունեցել Ն. Ադոնցի հայացքների ու նախասիրությունների ձեւավորման գործում:

16. Կ. Կոստանյանցը (1849-1920) երկար տարիներ է դասավանդել ճեմարանում (1878-1891, 1894-1911): Այդ ժամանակահատվածում ընդհատումներով վարել է նաեւ տնտչի պաշտոնը:

17. Փ. Վարդանյանցը (1842-1916) ճեմարան է հրավիրվել 1881 թվականին:

18. Նիկ. Խոսրովյանը, բացի դասավանդությունից, վարել է նաեւ ճեմարանի տնտչի պաշտոնը (1885-1886):

19. Ս. Մանդինյանը (1844-1915) ճեմարանում դասավանդել է 1881-1892, 1896-1900 թվականներին:

20. Ա. Նահապետյանը (1848-1906) երկար տարիներ վարել է Գեորգյան ճեմարանի տնտչի պաշտոնը եւ միաժամանակ դասավանդել (1881-1882, 1886-1891):

21. Ա. Սիմոնյանը ճեմարանում դասավանդել է 1881-1895 թվականներին:

22. Hors de son assiette (ֆրանսերեն բառացիորեն՝ «իր ափսեից դուրս»):

23. Իրականում Ն. Ադոնցը ճեմարանի լսարանական բաժինը չի ավարտել: Ավարտական քննություններից ընդամենը երեք ամիս առաջ՝ 1891 թ. փետրվարի 1-ին, նա դիմում է ներկայացրել ճեմարանի տնտչությանը ուսումնառությունը Թիֆլիսի ռուսական 2-րդ դասական գիմնազիայում շարունակելու խնդրանքով, որը եւ հարգվել է [տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 312, ց. 1, բ. 123, թ. 18 («Յուցակ Էջմիածնի Հայկական հոգեւոր ճեմարանի հեռացված սաների»)]:

24. Ն. Ադոնցը եւ Տիրայր Տեր-Հովհաննիսյանը Գեորգյան ճեմարանում միաժամանակ սովորել են 1882-1888 թվականների ընթացքում: Ճեմարանն ավարտելուց հետո Տիրայրն այստեղ դասավանդել է եկեղեցագիտական եւ աստվածաբանական առարկաներ (1888-1890), հետեւաբար՝ Ն. Ադոնցը աշակերտել է նաեւ նրան: Ահա թե ինչու է նա Տիրայր վարդապետին դիմում «ռաբբի» անվանումով:

25. Նկատի ունի Մեսրոպ արքեպ. Տեր-Մովսիսյանին (Մագիստրոս, 1865-1939), որը ծնվել է Զանգեզուրի Շիկահող գյուղում:

26. Limacon (Limaceous, Limacine) - խխունջ, улимка: Snail (Gastropoda)- լորձնէակ, слизняк - կակղամաշկ կենդանի:

27. Աբգ. Հովհաննիսյան (1849-1904) - հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական-մշակութային նշանավոր գործիչ: